Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

--------- 2022 թվականի N - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասի>>¦ Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երկու ամիս ժամկետով՝ 2022 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 724 քաղաքացու, որոնցից

566–ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 30-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 128-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 72 պահեստազորային, որոնցից՝ 18 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 18 - 24-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 25-ից մայիսի 4-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 15 - 24-ը ներառյալ, 27 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 17 - 26-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով մինչև 469 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 10 - 19-ը ներառյալ,

3) հետախուզական մասնագիտություններով մինչև 32 պահեստազորային, որոնցից՝ 26 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 18 - 27-ը ներառյալ, 6 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 19 - 28-ը ներառյալ,

4) ինժեներական մասնագիտություններով մինչև 31 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 30-ից հունիսի 8-ը ներառյալ,

5) տեխնիկական մասնագիտություններով մինչև 73 պահեստազորային, որոնցից՝ 42 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 10 - 16-ը ներառյալ, 31 պահեստազորային՝ 2022 թվականի հունիսի 6 - 15-ը ներառյալ,

6) թիկունքային մասնագիտություններով մինչև 47 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 15 - 24-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան